

ԱՍՏՈՒԱԾՄԻՐՈՒԹԵԱՄԲ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԻՆՔ

Մենք Աստուածատր հայրերու գալակներն ենք: Այսօր, սակայն մենք որքանով կը սիրենք զԱստուած եւ արդեօ՞ք կը սիրենք: Եթէ կը սիրենք, ինչո՞վ եւ ի՞նչպէս կ'արտայայտենք մեր սէրը. խօսքով, թէ՛ գործնապէս: «Մենք Աստուածատր ենք» խօսքը անկենդան լոգումք մը կը մնայ, եթէ երբեք մեր աստուածսիրութիւնը իր գործնական արտայայտութիւնը չգտնէ մեր կեանքին մէջ: Շատեր կան, որոնք կը խորհին, թէ Աստուածատր են եւ սակայն օրուան մէջ երկու վայրկեան աղօթքով ժամանակ չեն անցնիր իրենց սիրած Աստուծոյն հետ, չեն կարդար իրենց սիրած Աստուծոյն խօսքը, չեն աղօթեր անոր տան՝ եկեղեցիին նորագութեան ու հզօրացման համար: «Փառքի ու պատիւի արժանի է Տէրը» կ'ըսեն, բայց չեն փառաբաներ ու չեն պատուեր զայն: Խօսքով կը մեծարեն, իսկ գործով կը զգեսնեն անոր անունը: «Սո՛ւրբ ու բարի՛ է անոր կամքը» կ'ըսեն, բայց չեն կատարեր զայն: «Մեղրէն աւելի քաղցր են անոր պատուիրանները» կը յայտարարեն, բայց ոչ մէկ նիգ կը թափեն գործադրելու զանոնք: Եւ այդպիսիները կը մոռնան Տիրոջ խօսքը. «Եթէ կը սիրէք զիս, պիտի գործադրէք իմ պատուիրաններս» (Յհ. 14.15,21,23): Այսօրուան հաւատացեալը պէտք է վերանորոգէ իր սէրը Քրիստոսի հանդէպ: Պէտք է սիրէ Քրիստոսը «Ինչպէս մաքուր կոյս մը, որ իր սէրը կը վերապահէ անոր՝ որ իր ամուսինը պիտի ըլլայ» (Բ. Կր. 11.2): Պէտք է զայն սիրէ անմար սիրով (Եփ. 6.24) եւ այս սէրը մեր մէջ դնողը Սուրբ Հոգին ինքն է (Հո. 5.5):

Ի՞նչ կը խորհրդանշէ Ողջոյնը
պատարագի ընթացքին



Ողջոյնը առաջին հերթին խաղաղութեան եւ սիրոյ խորհրդանշիչ մըն է, որով հաւատացեալները կը միանան Քրիստոսի, մասն իրարու, հետեւելով Պօղոս Առաքեալի պատուէրին, որ կ'ըսէ. «Սուրբ համբոյրով ողջոյն տուէ՛ք իրարու» (Բ. Կորնթացիս 13.12):

Ողջոյնին իմաստը հաւատացեալներու միութիւնն է, եղբայրական հարազատ սիրով եւ ոգիով, առանց մէկը միւսէն խռոված ըլլալու: Անոնք կ'ողջագուրուին իրարու հետ, որպէս բարեկամներ՝ առանց բարկութեան, նեղութեան, տարակարծութեան կամ ատելութեան: Այս բոլորը, Քրիստոսի պատուէրին համաձայն, երբ ան կը թելադրէ. «Եթէ գոհարանին վրայ, ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես՝ որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ գոհարանին առջեւ, գնա՛, նախ հաշտուէ՛ եղբորդ հետ եւ ապա, եկու՛ր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ՛ք»:



ԺՁ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 21 ՄԱՅԻՍ 2023 ԹԻՒ 21

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 23.12-35: Ա. Յհ. 5.13-21: Յհ. 12.12-23:

ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ
Աւետարան ըստ Յովհաննէսի 12.12-23

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ Ջատկուան տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմատենիի ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով. «Ովսաննա՛, օրհնեա՛լ ըլլայ ան, որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի թագաւորը»:

Յիսուս էլ մը գտնելով նստաւ անոր վրայ, ինչպէս որ Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. «Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Միոնի՛ աղջիկ, որովհետեւ թագաւորդ քեզի կու գայ իշու մը աւանակին վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ՝ այն ատեն յիշեցին, թէ այս կատարուածները Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ գրուածն էր, որ կատարեցին: Բոլորն ալ կը վկայէին, թէ Յիսուս Ղազարոսը կանչեց գերեզմանէն եւ զայն մեռելներէն յարուցանեց: Այս իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորելու ելան, որովհետեւ լսած էին, թէ ինչպէս ան յարութեան հրաշքը գործած էր: Իսկ փառիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնե՞ք, որ բան մըն ալ չենք կրնար ընել. ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի»:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած էին Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու: Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին. «Տէ՛ր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»: Փիլիպպոս եկաւ Անդրեասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը: Յիսուս պատասխանեց. «Ահա մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ»:

Պարտինք ամէն օր Աստուածաշունչ կարդալ, որպէսզի լաւապէս ճանչնանք մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԳ

Համբարձման յաջորդող Ս. Չատկի եօթներորդ Կիրակին կը կոչուի Երկրորդ Ծաղկազարդ: Այս առթիւ Ծաղկազարդի ընթերցուածները ու շարականները նոյնութեամբ կը կրկնուին:

Երկրորդ ծաղկազարդի տօնախմբութիւնը սահմաններ է Ներսէս Ծնորհալիին եղբայրը՝ Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը, հիմնուելով Գրիգոր Լուսաւորիչի Խոր Վիրապի մէջ գտնուած ժամանակ պատահած մէկ աւանդական դէպքի վրայ:

Գրիգոր Լուսաւորիչը երբ կը գտնուէր Խոր Վիրապին մէջ, անոր կը սպասարկէր հրեշտակ մը: Համբարձման չորրորդ օրը՝ Կիրակի օր, հրեշտակը չերեւնար: Միւս օրը Լուսաւորիչը կը հարցնէ պատճառը եւ կը տեղեկանայ, որ այդ օրը երկնային քահանայապետութիւնը կը տօներ Յիսուսի երկինք համբառնալը եւ նոյն օրը չորրորդ դասակարգութեան տօնն էր:

Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը յատուկ շարականով կը ճոխացնէ երկրորդ Ծաղկազարդի Կիրակին, որուն օրհնութիւնն է «Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ, գորհոգւոց լուսատուն ի պաշտպանէն իրմէ լուեալ, եթէ տօն մեծ է այսօր իմոյ դասուն որ ի յերկինս»:

Երկրորդ ծաղկազարդին կը յաջորդէ Ս. Հոգեգալստեան Տօն:

Հ ԱՐՑ ՈՒՄ ՊԱՏ ԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչ է խաչահանգիստի արարողութիւնը

Անցեալին, յատկապէս թաղային եկեղեցիներուն մէջ կատարուող արարողութիւն մըն էր խաչահանգիստը, ինչ որ պարզ ջուրի օրհնութիւնն էր Կենաց Փայտը իր մէջ ամփոփող խաչով:

Սովորութիւն էր, Կիրակիէն գատ շաբթուան մէջ որոշեալ օր մը, Ս. պատարագ մատուցանել եւ յաւարտ Ս. պատարագին խաչահանգիստ կատարել եւ օրհնուած ջուրը բաշխել ժողովուրդին:

Արարողութիւնը կը սկսի «Ապաւինեցաք ի Խաչ քո արարիչ յաւիտեանից...» շարականով: Ընթացքը հոխացած է Ս. Գրային եւ աւետարանական հատուածի մը ընթերցումներով, եւ ապա Աղօթքն է, որ կու գայ հաւատացեալներուն ուշքն ու ներշնչարհը գրաւելու: Աղօթքը, որ այնքան գեղեցիկ կերպով կը բանաձեւէ ջուրին կարեւորութիւնը թէ՛ մարդկային, կենդանարար աշխարհին եւ թէ՛ բնութեան մէջ:

Ձերմ աղերսանք մըն է անկաւուրդուած Հօր Աստուծոյ, որպէսզի իր օրհնութիւնը իջեցնէ ջուրին վրայ, եւ բոլոր խմողները իրենց հիւանդութեանց բժշկութիւն գտնեն եւ ցաւերու՝ փարատում: Բոլոր հօտերն ու նախիրները այդ ջուրէն խմելով ցաւերէ գերծրլլան եւ ծնանին:

Եւ օրհնուած այս ջուրը բոլոր տուններուն ու բոյսերուն վրայ որ ցողուուի՝ ժանգէն, թրթուրէն եւ ամէն պատահարներէն անվնաս մնան եւ աւելի պտղաբեր դառնան, մարդոց բարիքին համար:

Այս բոլորէն ետք կը գգանք, թէ հաւատքով լեցուն կիներն ու մամիկները, ինչպիսի երկիրդածութեամբ ումպ մը պիտի ուզէին խմել իրենց ցաւերուն եւ առողջութեան ի խնդիր:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԴԺՈՒԱՕՐ Է ՓՈԽՈՒԻԼ

Մեղքի մէջ ինկած եւ աշխարհի կեանքը ապրող մարդիկ երբեմն կը գիտակցին իրենց վիճակին եւ կ'որոշեն փոխուիլ: Օրինակ, թմրեցուցիչ գործածող մը կրնայ յանկարծ որոշում առնել ալ չգործածել, կամ ստախօս մը՝ սուտը դադրեցնել, բամբասող մը՝ բամբասանքին վերջ դնել, եւ այլն: Անոնց մօտ փոփոխութիւնը ամբողջական չ'ըլլար, այլ՝ մասնակի. արմատական չ'ըլլար, այլ՝ մակերեսային: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ անոնք կ'որոշեն փոխուիլ բայց չեն որոշեր դարձի գալ: Մէկը չի կրնար իր սեփական ուժով փոխուիլ: Կը փոխուի ա՛ն միայն՝ որ դարձի կու գայ Քրիստոսի, կը խոստովանի իր մեղքերը, իր տկարութիւնները եւ կը յանձնուի Սուրբ Հոգիին առաջնորդութեան:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Հրամայէ՛, Տէ՛ր, որ անդամալոյծին պէս առողջանամ, մէկ կողմ նետն ցաւերուս անկողինը, Տիրոջ տան մէջ շրջիմ Քու կամարարներուդ հետ եւ Աստուծոյ գաւիթին մէջ ծաղկիմ ու ջնեղանչեմ:

Խորտակէ՛, Տէ՛ր, սաստանային բռնութիւնը, մէկդի նետն անոր զօրութիւնը, արգիլէ՛ անոր յարձակումը վրաս, որպէսզի մարմինս ընդունայն վարելով՝ չտանի լայն ճամբով, որ կորուստի եւ սպականութեան կը տանի:

Ս. Եփրեմ Ասորի

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՈՒՂ ՊԱՏԱՆԱՆԵՐ ԿԸ ՓՆՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ, Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 20

Տէ՛րը թող լսէ աղօթքներդ, երբ որ անձկութեան մէջ ես: Մեր հայրերուն Աստուածը ի՛նք թող պաշտպան ըլլայ քեզի: Քեզի օգնութիւն թող դրկէ իր սրբարանէն, եւ Սիոնէն քեզ գօրացնէ: Տէ՛րը թող յիշէ քու նուէրներդ, եւ գոհերդ ընդունելի համարէ:

Տէ՛րը սրտիդ համեմատ թող տայ քեզի եւ քու բոլոր փափաքներդ կատարէ:

Մենք քու բերած փրկութեամբդ պիտի ցնծանք, եւ Աստուծոյդ յաղթանակին դրօշը պիտի կրենք: Տէ՛րը կատարէ՛ բոլոր խնդրանքներդ:

Հիմա գիտցայ, որ Տէ՛րը կը փրկէ իր օծեալը, անոր աղօթքին պատասխան կուտայ իր սուրբ երկինքէն եւ իր գօրութեամբ անոր մեծամեծ յաղթանակներ կը պարգեւէ: Ոմանք իրենց պատերազմի կտրեցում, ուրիշներ՝ ձիերու կ'ապաւինին, բայց մենք Աստուծոյ՝ մեր Տիրոջ կ'ապաւինինք: Անոնք պիտի ծունկի գան եւ իյնան, մինչ մենք կանգուն պիտի մնանք, գլուխնիս բարձր:

Ո՛վ Տէ՛ր, փրկէ՛ թագաւորը, երբ քեզ կանչենք՝ պատասխանէ՛ մեր աղօթքներուն:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

Զգաստութեան որպէս նախապայման իմաստութիւն ունեցիր եւ կեանքիդ բոլոր քննապարհներուն խոհեմ եղիր (Առակ. 4):